

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03  
վիճակագրության պետական խորհրդի նիստի

22.02.2016թ.

ժ.11: 00

*Մասնակցում էին՝ Ս.Մասցականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Ս.Դավթյան, Յու. Պողոսյան, Ա.Սաֆյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար):*

*Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Ս. Երիցյան (գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ), Գ.Մարտիրոսյան (նախագահի խորհրդական), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ):*

**Օրակարգի նախագծում չորս հարց.**

1. «Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականին սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զանրյուղի կշիռների (2015 թվականի դեկտեմբեր ամիսը որպես բազիսային ժամանակահատված) հաշվարկման մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ս.Երիցյան/*

2. «2016 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթում լրացում կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

3. Հաղորդում՝ Լյուքսեմբուրգի Դքսության Լյուքսեմբուրգ քաղաքում 2016 թվականի փետրվարի 3,1, 9-ից 10-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ս.Մասցականյան/*

3.2. Հաղորդում՝ Ավստրիայի Հանրապետության Վիեննա քաղաքում 2015 թվականի դեկտեմբերի 16-ից 18-ը Միավորված ազգերի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից կազմակերպված «Արդյունաբերության վիճակագրության բարելավումը և արդյունաբերության կատարողականի ցուցանիշների մշակումը՝ ԱՊՀ երկրներում քաղաքականության վերլուծության համար» ծրագրի շրջանակում «Արդյունաբերության զարգացման միտումները և մրցակցությունը ԱՊՀ երկրներում» բարձր մակարդակի սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Հ. Հովհաննիսյան/*

**4. Այլ հարցեր**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականին սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զանրյուղի կշիռների (2015 թվականի դեկտեմբեր ամիսը որպես բազիսային ժամանակահատված) հաշվարկման մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ս.Երիցյան/*

**Որոշեցին՝**

հաստատել 2016 թվականի սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական զանրյուղի կազմը և կառուցվածքը (համաձայն հավելվածի), և սպառողական գների ինդեքսի հաշվարկների համար որպես բազիսային ժամանակահատված սահմանել 2015 թվականի դեկտեմբեր ամիսը:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

### **Լսեցին՝**

2. «2016 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթում լրացում կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

### **Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին» թիվ 35-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը. որոշմամբ հաստատված հարցաթերթը «Բաժին Հ»-ից հետո լրացնել նոր բաժնով՝ համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

### **Լսեցին՝**

3. Հաղորդում՝ Լյուքսենբուրգի Դքսության Լյուքսենբուրգ քաղաքում 2016 թվականի փետրվարի 3,1, 9-ից 10-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ս.Մասցականյան/*

3.2. Հաղորդում՝ Ավստրիայի Հանրապետության Վիեննա քաղաքում 2015 թվականի դեկտեմբերի 16-ից 18-ը Միավորված ազգերի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից կազմակերպված «Արդյունաբերության վիճակագրության բարելավումը և արդյունաբերության կատարողականի ցուցանիշների մշակումը՝ ԱՊՀ երկրներում քաղաքականության վերլուծության համար» ծրագրի շրջանակում «Արդյունաբերության զարգացման միտումները և մրցակցությունը ԱՊՀ երկրներում» բարձր մակարդակի սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Հ. Հովհաննիսյան/*

### **Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**ՆԱԽԱԳԱՀ**

**Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**